

## ՔԱՂՎԱԾՔ

### Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի ընդհանուր ժողովի արձանագրությունից

2017թ-ի հունվարի 23-ին ժամը 15/00-ին Արմավիրի մարզի Ծաղկունք համայնքի  
մշակույթի տան դահլիճում կայացավ Ծաղկունք համայնքի բնակիչների ընդհանուր  
ժողովը:

Ժողովին ներկա էին Ծաղկունք համայնքի ավագանու անդամները, բուժ-  
ամբուլատորիայի աշխատակիցները, համայնքապետարանի համայնքային  
ծառայողները, Արմավիրի փոխմարզպետ Լ. Մուրադյանը , ինչպես նաև համայնքի թվով  
43 բնակիչ:

Օրակարգում` Ծաղկունք համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2016թ-ի  
կատարած աշխատանքների վերաբերյալ:

Համայնքի ղեկավար Դ. Կարապետյանը ներկաներին ներկայացրեց 2016թ-ի  
ընթացքում կատարված աշխատանքները համայնքի բնակիչների իրավունքների  
պաշտպանության բնագավառում, հանգամանորեն անդրադարձավ նաև ֆինանսների  
պաշտպանության, քաղաքաշինության և հողօգտագործման, կոմունալ տնտեսության և  
բարեկարգման, տրանսպորտի, առևտրի և սպասարկման, սոցալական ծառայության  
և գյուղատնտեսության բնագավառներում կատարված աշխատանքներին:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նաև բյուջեի եկամուտների մասով տարեկան  
հաշվետվություն

1. վարչական բյուջեով պլանավորված 31490.0 հազ. դրամից , փաստ. 32347 5 հազ. դր  
102.7% , որից` 12065.0 հազ. դրամ սեփական եկամուտների մասով, փաստ. 12922.5  
հազ. դր., /107.0%/, որից`  
ա/ հողի հարկ պլ. 5200.0 հազ. դրամ, փաստ. ` 5127.9 հազ. դրամ/ 98.6% /

բ/ Փուլքահարկ փոխադրամիջոցների համար պլ. 4500.0 հազ. դր. , փաստ 3737 5 հազ  
դր. /83.0%/:

գ/ Փուլքահարկ շենքերի և շինությունների համար պլ. 1300.0 հազ դր փաստ. 3375 9  
հազ. դր./ 259.6%/:

դ/ Տեղական տուրքերի մասով պլ. 598.0 հազ. դր. փաստ. 140.0 հազ. դր. /23.4% /

ե/ Վարձակալական հողերի վճար պլ. 460.0 հազ. դր.փաստ. 465.7 հազ. :

զ/ Տեղական վճարի մասով գանձվել է 75.5 հազ. դրամ:

Դ. Կարապետյանը նշեց նաև համայնքում առկա մի շարք հիմնախնդիրների մասին  
մասնավորապես խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման,  
միջհամայնքային ճանապարհների բարեկարգման, մշակույթի տան դահլիճի  
վերանորոգման , ոռոգման ցանցում կիսախողովակների տեղադրման և մանկապարտեզի  
շենքի կառուցման անհրաժեշտության մասին:

Համայնքի ղեկավար Ռ. Կարապետյանը համապետության խնդրեց ավելի ակտիվ մասնակցություն ունենալ համայնքում տեղական ինքնակառավարման աշխատանքներին՝ դրանով պայմանավորելով հետագայում համատեղ ձեռք բերվելիք հաջողությունները:

Իր ելույթում համայնքի ավագանու անդամ Անգին Ամիրջանյանը նշեց, որ համայնքի ղեկավարի 2016թ-ի տարեկան գործունեությունը համապատասխանում է համայնքի ֆինանսական հնարավորություններին և առաջարկեց հավանություն տալ կատարված աշխատանքներին:

Իր խոսքում Արմավիրի փոխմարզպետ Լարիսա Մուրադյանը նույնպես կարևորեց տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակչության մասնակցությունը. նշելով նաև որ Արմավիրի մարզպետարանը ինչպես միշտ օգնելու է համայնքապետարանին իր մասնագիտական գործունեության իրականացման և համայնքի ղեկավարին աջակցելու գործում:

Ժողովը դրական գնահատեց համայնքի ղեկավարի 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքը:

Համայնքի հիմնախնդիրները՝

1. Խմելու ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգում:
2. Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:
3. Մշակույթի տան դահլիճի վերանորոգում:
4. Ոռոգման ցանցի կիսախողովակների տեղադրում:
5. Մանկապարտեզի շենքի կառուցում:

Ծաղկունց համայնքի ղեկավար՝

23.01.2017թ.



Կարապետյան

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ԾԱՂԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ**  
**ԿԱՏԱՐՄԱՆ**

Բյուջեի մուտքերի և ելքերի 2015 թվականի փաստացի, 2016 թվականի հաստատված և փաստացի կատարված ցուցանիշները

Եկամտաբեր անվանումը	2015թ. փաստացի կատարված	2016թ. հաստատված	2016թ. փաստացի կատարված	2016թ. փաստացի կատարողականի տոկոսը 2016թ. հաստատվածի նկատմամբ
Հողի հարկ	5063.8	5200.0	5127.9	98.6%
Գույքահարկ	7495.6	5800.0	7113.4	122.6%
1.Շենքերի և շինույթ. 2.Փոխադրամիջոց	2095.6 5400.0	1300.0 4500.0	3375.9 3737.5	259.6% 83.0%
Տեղական տուրքեր	464.0	598.0	140.0	23.4%
Գույքի վարձակալությունից եկամուտ	424.5	460.0	465.7	101.2%
Ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա, այլ դոտացիա	16773.3	19425.0	19425.0	100%
Տեղական վճարներ	14.0	7.0	75.5	0.0%
Ընդամենը եկամուտներ	30235.2	31490.0	32347.5	102.7%

Ծախսերի անվանումները	2015թ փաստացի կատարված	2016թ հաստատված	2016թ փաստացի կատարված
01.1.1 օրենսդիր և գործադիր մարմիններ	20163.6	23022.0	20385.6
01.6.1 Ընդհ. բնույթի հանրային ծառայություն.	1780.0	2030.0	1650.0
05.1.1 Շրջակա միջավայրի պաշտպանութ	996.0	996.0	996.0
08.2.4 Այլ մշակութային կազմակերպություններ	2050.0	2550.0	2210.0
10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ	2500.0	2892.0	2892.0
<b>Ընդամենը</b>	<b>27489.6</b>	<b>31490.0</b>	<b>28133.6</b>

Հաշվետու 2016 թվականի ընթացքում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից ծախսեր չի կատարվել:

Հաշվետու տարվա ընթացքում բյուջեի պարտքերի սպասարկում չի կատարվել՝ դրանց բացակայության պատճառով: Ֆոնդային բյուջեով եախատեւված ծախսեր ևս չի կատարվել հաշվետու տարվա ընթացքում:

Օտղկունք համայնքի ղեկավար



Կարապետյան